ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ

Փորձար. և կլինիկ. բժշկություն

т. XXXI, № 2, 1992

Эксперим. и клинич. медицина

К 100-летию со дня рождения выдающегося ученого-эпидемиолога
А. Б. Алексаняна

ԽՍՀՄ ԲԳԱ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄ Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1992 թ. լրանում է Հայաստանի համաճարակաբանական ծառայության հիմնադիր, ականավոր գիտնական, Հայաստանի առողջապահության նախարարության Գիտական բժշկական խորհրդի նախագահ, Երևանի պետական բժշկական ինստիտուտի համաճարակաբանության և բժշկական մակաբուծաբանության ամբիոնի անփոփոխ վարիչ, հանրապետության համաճարակաբանների, մանրէաբանների և ինֆեկցիոնիստների ընկերության նախագահ, ԽՍՀՄ ԲԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Արտո Ալեքսանյանի ծննդյան 100-ամյակը։

Արտո Ալեքսանյանը ծնվել է 1892 թ. ք. Թբիլիսիում, բանվորի ընտանիքում։ Գիմնազիան վերջացնելուց հետո ուսումը շարունակել է Օդեսայի համալսարանի բժշկական ֆակուլտետում, որը 1916 թ. ավարտելուց հետո կոչվել է զինվորական ծառայության Կովկասյան ճակատ, որտեղ նա բժշկական օգնություն է ցույց տվել զինվորներին և միաժամանակ ստիպված կազմակերպել տարածված վարակիչ հիվանդությունների դեմ։ 1920 թ. նա հրավիրվում է Հայաստանի Նոյեմբերյանի (Բարանինյան) շրջանի Կողբ գյուղ գյուղական բժշկի պաշտոնով։ Այն ժամանակ չափազանց ծանր էին պայմանները (մասսայական հիվանդություններ, քաղց և այլն), չկային բժշկական տարրական սարքավորումներ, անհրաժեշտ դեղորայք և գործիքներ։ Մինչև 1926 թ. նա աշխատում է Նոյեմբերյանի շրջանում, Դիլիջանում և Նոր Բայազետում, որտեղ հիմնում է գյուղական հիվանդանոց, սանիտարա-հիգիենիկ լաբորատորիա և այլն։ Այստեղ նույնպես նա շարունակում է հետևողական և համառ պայքարը վարակիչ հիվանդությունների դեմ. դրա վառ օրինակը կարող է հանդիսանալ բոր հիվանդության իսպառ վերացումը տվյալ տարածքում։ Անհրաժեշտ է նշել, որ այդ հիվանդներին լեպրաղորիա ուղարկելու նպատակով նա Բասարգեչարից, Մարտունիից և Նոր Բայազետից անձամբ ուղեկցում էր մինչև Երևան սայլով՝ լինելով սերտ շփման մեջ նրանց հետ, վտանգի ենթարկելով իրեն։ Նա միաժամանակ զբաղվում էր ընդհանուր սանիտարական հարցերով՝ բաղնիքների կառուցման, շրամատակարարման, բնակարանային պայմանների բարելավման, ճահիճների չորացման և բազմաթիվ այլ հրատապ հարցերով։ Նա հանդիսանում էր Կողբի գյուղխորհրդի դեպուտատ և Նոյեմբերյանի շրջանի գործկոմի նախագահության անդամ, իսկ Նոր Բայազետում՝ քաղսովետի դեպուտատ։ 1926 թ. նա նշանակվում է հանրապետության առողջապահության ժողովրդական կոմիսարիատի սանիտարահամաճարակաբանության բաժնի վարիչի տեղակալ, իսկ 1929 թ.՝

վարիչի պաշտոնում։ Բնական է, այդ շրջանում չկային համաճարակաբանական ոչ մի հիմնարկ, ծառայություն և կադրեր, պահանջվում էր մեծ տոկունություն և հետևողականություն այդ գործի համար, իսկ այն խիստ անհրաժեշտ էր հանրապետությանը, որտեղ ազգաբնակչությանը խեղդում էին ինֆեկցիաները՝ խոլերան, մալարիան և այլն։ Մինչդեռ հանրապետությունում բարձրորակ կադրերի խիստ կարիք էր զգացվում։ 1927 թ. Արտո Ալեքսանյանը Երևանում հիմնում է առաջին սանիտարա-հիգիենիկ լաբորատորիան։ 1928 թ. այն դառնում է հանրապետական կենտրոնական սանիտարա-հիգիենիկ լաբորատորիա, որը նրա անմիջական ջանքերով 1930 թ. վերածվեց Հանրապետական սանիտարիայի և հիգիենայի ինստիտուտի, դառնալով հանրապետության կարևոր գիտահետազոտական կենտրոն։ Այստեղ Ա. Ալեքսանյանը ղեկավարում էր համաճարակաբանության բաժինը և հանդիսանում էր ինստիտուտի փոխտնօրենը գիտական գծով մինչև 1935 թ.։ 1935 թ.-ից մինչև 1940 թ. Ա. Ալեքսանյանը եղել է հանրապետության գլխավոր պետական սանիտարական տեսուչ և միաժամանակ առժողկոմատի հակահամաճարակային վարչության պետ։ Նրա անմիջական ջանքերով են կազմակերպվել սանիտարա-էպիդեմիոլոգիական կայաններ հանրապետության քաղաքներում և շրջաններում (1936 թ.), խոշոր ինֆեկցիոն հիվանդանոցներ Երևանում (1937 թ.) և Լենինականում (1939 թ.), քաղաքային դեզինֆեկցիոն (1937 թ.) և հակատուլարեմիային (1940 թ.) կայաններ, վերջինս հետագայում վերածվեց հակաժանտախտային խոշոր կայանի, որը գործում է մինչև օրս։ 1939 թ. Ա. Ալեքսանյանը կազմակերպեց համաճարակաբանների, մանրէաբանների և ինֆեկցիոնիստների Հանրապետական ընկերությանը, որի անփոփոխ ղեկավարն էր մինչև իր կյանքի վերջը։

Մեծ է Ա. Ալեքսանյանի ավանդը մասնագիտական կադրերի պատրաստման հարցում։ Դասավանդական աշխատանքը ուսումնական հիմնարկում նա սկսել է դեռևս 1928 թ., սկզբում, որպես փորձարարական հիգիենայի ամբիոնի ասիստենտ, իսկ 1931 թ. որպես համաճարակաբանության ինքնուրույն դասախոս Երևանի բժշկական ինստիտուտում։ 1931 թ. նա մյուս դասախոսների հետ համատեղ հարց բարձրացրեց բժշկական ինստիտուտում սանհիգիենիկ ֆակուլտետի կազմակերպման անհրաժեշտության մասին։ Այդ նույն թվականին կազմակերպվեց նաև համաճարակաբանության ամբիոնը, որի անփոփոխ ղեկավարն էր հարգարժան Ա. Ալեքսանյանը ամբողջ 40 տարի՝ մինչև իր կյանքի վերջը։ Նրա հետաքրքիր, փորձով լեցուն և բովանդակալից դասախոսությունները գերում էին լսողներին։ Նա հմուտ վարպետի նման սովորեցնում և կրթում էր երիտասարդ կադրերին, սեր առաջացնում դեպի կանխարգելիչ աշխատանքը, բժշկական ինստիտուտի անդամ բուժական ֆակուլտետի ուսանողները, թողնելով բուժական աշխատանքը, գնում էին այդ բնագավառ՝ Ա. Ալեքսանյանի հետքերով։ Նա մեծ պահանջկոտություն էր ցուցաբերում իր և իր օգնականների նկատմամբ, ասելով. «Ես պետք է խոստովանեմ, որ սովորեցնելով և սիրով աճեցնելով երիտասարդությունը, միաժամանակ աճել և զարգացել եմ ինքս, ճանաչելով շատ բան, որ ինձ համար եղել է անհայտ, անծանոթ։ Դասավանդական գործունեությունը պարտավորեցրել է ինձ մշտապես բարձրացնել իմ գիտելիքների մակարդակը։ Չէ՞ որ այն ժամանակ ես եղել եմ երիտասարդ, սկսնակ դասախոս»։ 1935 թ. Ա. Ալեքսանյանին շնորհվում է դոցենտի կոչում և 1936 թ. գիտական աշխատանքների հանրագումարի հիման վրա նրան շնորհվում է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան։ 1938 թ. նա ստանում է պրոֆեսորի կոչում, իսկ

1940 թ.—բժշկական գիտությունների դոկտորի աստիճան։ Նրա գիտական կոնսուլտանտն էր Ն. Ֆ. Գամալեան։ Դիսերտացիոն աշխատանքը նվիրված էր դիֆթերիայի կանխարգելման և պայքարի հարցերին և արժանացավ բարձր գնահատականի։

Ա. Ալեքսանյանի ղեկավարությամբ պատրաստվել են 60-ից ավելի դիսերտացիոն աշխատանքներ՝ այդ թվում՝ 15 դոկտորական։ Նրա կողմից պատրաստված մասնագետները դարձել են ամբիոնի վարիչներ Երևանի բժշկական և Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտներում, գիտահետազոտական հիմնարկների ղեկավարներ, գլխավոր բժիշկներ և գործնական առողջապահության հիմնարկների ղեկավարներ հանրապետության տարբեր քաղաքներում և շրջաններում ու նրա սահմաններից դուրս։

Ա. Ալեքսանյանը գիտական աշխատանքով սկսել է զբաղվել դեռևս ուսանողական տարիներից, շարունակելով գյուղի պայմաններում և ամենուրեք, անկախ նրանից, թե որտեղ է աշխատել։

Ա. Ալեքսանյանի գրչին են պատկանում շուրջ 200 գիտական աշխատանքներ, այդ թվում 9 մենագրություններ, ձեռնարկներ ու դասագիրք, որը դարձել է բժիշկ-համաճարակաբանների ամենօրյա սեղանի գիրքը, նվիրված՝ ինֆեկցիոն պաթոլոգիային, համաճարակաբանության, իմունաբանության, հակահամաճարակային միջոցառումների մշակման խնդիրներին։ Առավել մանրակրկիտ և երկարատև նրա կողմից ուսումնասիրվել են դիֆթերիայի և աղիքային ինֆեկցիաների համաճարակաբանական առանձնահատկությունները և մշակվել են համապատասխան հակահամաճարակային միջոցառումներ։ 1939 թ. մանրէաբանների համամիութենական կոնֆերանսում Ա. Ալեքսանյանը առաջինն էր, որ հարց բարձրացրեց ԽՍՀՄ-ում դիֆթերիայի իսպառ վերացման հնարավորության մասին։

1964 թ. համաճարակաբանների, մանրէաբանների և իմունաբանների համամիութենական համագումարում՝ և 1966 թ. Մոսկվայում մանրէաբանների 9-րդ միջազգային կոնգրեսում նա ներկայացրեց դիֆթերիայի հարուցիչի հիմնովին վերացման ուղիները։ Ա. Ալեքսանյանը դիֆթերիային նվիրված իր 40 տարվա հետազոտությունների արդյունքներն ամփոփել է դիֆթերիային նվիրված մենագրության մեջ։

Առանձին հիշատակության է արժանի Ա. Ալեքսանյանի ընդհանուր և մասնավոր համաճարակաբանության վերաբերյալ դասագիրքը (1960 թ.), որով առաջնորդվում են մինչև այսօր ուսանողները։

Գիտական հարցերի ուսումնասիրությունների ընթացքում նա ընդգրկում էր ոչ միայն ամբիոնի, հարակից ամբիոնների, գիտա-հետազոտական հիմնարկների, այլև գործնական առողջապահության (հակաժանտախտային կայան, քաղաքային և շրջանային սան-էպիդ կայաններ, դիսպանսերներ, հիվանդանոցներ) աշխատողներին։

Անձնական, նրա աշակերտների կողմից սահմանված դիտարկումների, ինչպես նաև գիտա-հետազոտական աշխատանքների նման լայն ծավալման շնորհիվ կազմվեց հանրապետությունում արձանագրվող ինֆեկցիոն հիվանդությունների ուսումնասիրության թեմատիկ պլան, որի մեջ ընդգրկվում էին որովայնային տիֆը, պարատիֆերը, բակտերիալ դիզենտերիան, ամեոբիազը, ընական ծաղիկը, դիֆթերիան, էպիդեմիկ ցերեբրոսպինալ մենինգիտը, բծավոր և տզային հետադարձ տիֆերը, տուլյարեմիան, բրուցելոզը, ժանտախտը և ուրիշներ։ Ուսումնասիրվել է զանազան վակցինների արդյունավետությունը լաբորատոր պայմաններում և էպիդեմիոլոգիական փորձարկմամբ։

Ա. Ալեքսանյանի կողմից մեծ ուշադրություն էր դարձվում դեզինֆեկցիայի, համաճարակաբանության պատմության հարցերի վրա։ Բնական է, աշխատանքի նման բազմակողմանի և ծավալուն կազմակերպումը տվեց իր արդյունքը կադրերի պատրաստման, ինֆեկցիոն պաթոլոգիայի խնդիրների լուծման, հիշատակված բազմապիսի վարակիչ հիվանդությունների էպիդեմիայի, կլինիկայի, համաճարակաբանության, իմունիտետի, բնական օջախների, կանխարգելման ու պայքարի հարցերի բացահատման և մշակման համար։

Գիտական աշխատանքների պլանավորման ժամանակ, բացի տեսակետից, նա միշտ հաշվի էր առնում գործնական առողջապահության պահանջները և առաջարկները, անհրաժեշտության դեպքում առաջադրված հարցերը դնում էր լայն քննարկման։ Ա. Ալեքսանյանը այն եզակի ղեկավարներից մեկն էր, որ միշտ հանրապետությունում գիտական և կազմակերպչական հարցերի լուծման ընթացքում համագործակցում էր մյուս քաղաքների՝ Մոսկվայի, Լենինգրադի, Կիևի, Խարկովի, Թբիլիսիի գիտնականների հետ, ստեղծում էր գիտական մտքի մի ամբողջություն, որն ընդունվում էր ամենուր, իսկ Անդրկովկասում նրան կոչում էին «Անդրկովկասի պատրիարք»։

Հայաստանում համաճարակաբանական գործի հիմնադիր՝ Ա. Ալեքսանյանը թողել է գիտագործնական աշխատողների մի այնպիսի դպրոց, որը պատվով շարունակում է նրա պատգամները և ծրագրերի իրագործումը։ Նրա անունով է կոչվում Հայաստանի առողջապահության նախարարության Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական մակաբուծաբանության գիտահետազոտական ինստիտուտը։ Այդ ինստիտուտում, ինչպես նաև Երևանի բժշկական ինստիտուտի համաճարակաբանության և բժշկական մակաբուծաբանության, Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի համաճարակաբանության և մանրէաբանության ամբիոններում իրականացվում են նրա թողած ավանդները. այդ ինստիտուտում, ինչպես նաև վերը նշված համաճարակաբանական պրոֆիլի ամբիոններում շարունակվում են աղիքային ինֆեկցիաների համաճարակաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունները և մշակվում են կանխարգելման և պայքարի միջոցառումներ՝ ելնելով նրանց արդի ժամանակաշրջանի առանձնահատկություններից, դիֆթերիայի իմունականխարգելման հարցերը՝ նրա խիստ իրեցման փուլում։ Ուսումնասիրությունների մեջ ընդգրկվել են նաև այնպիսի վարակիչ հիվանդություններ, որոնք սկսել են առավել հաճախ արձանագրվել վերջին տարիների ընթացքում, այն է սալմոնելոզ, վիրուսային հեպատիտներ, ռոտավիրուսներ, արբովիրուսներ և այլն։

Գիտագործնական բուռն գործունեության հետ մեկտեղ Ա. Ալեքսանյանը ակտիվորեն մասնակցում էր հասարակական կյանքին, նա հանդիսանում էր համամիութենական և հանրապետական մի շարք հանդեսների խմբագրական կոլեգիայի անդամ, 1956 թ. Բժշկական մեծ հանրագիտարանի համախմբագիր, համաճարակաբանների, մանրէաբանների, իմունաբանների Համամիութենական գիտա-բժշկական ընկերության նախագահության անդամ։ Նա բազմաթիվ անգամ մասնակցել է միջազգային գիտաժողովների՝ Չեխոսլովակիայում, Անգլիայում, Շվեդիայում և այլուր։ 1961 թ., լինելով տաք կլիմա ունեցող երկրների ինֆեկցիոն հիվանդություններին նվիրված միջազգային կոնֆերանսի պատգամավոր Հայաստանից, նա զեկուցել է «Մալարիան Հայաստանում և նրա իսպառ վերացումը» աշխատանքը, որը առաջացրել է մեծ հետաքրքրություն։

1945 թ. Ա. Ալեքսանյանը ընտրվել է ԽՍՀՄ բժշկ. գիտ. ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1960 թ.՝ իսկական անդամ։ 1955 թ. նրան շնորհվել է «Գիտության վաստակավոր գործիչ» կոչումը։ Իր հակահամաճարակային ասպարեզում կատարած բարեխիղճ, անբասիր և արդյունավետ աշխատանքի համար նա արժանացել է կառավարական բազմաթիվ պարգևների՝ շքանշաններ, մեդալներ և պատվոգրեր։

Ա. Ալեքսանյանի խելքը, մեծ սերը դեպի մարդը և աշխատանքը, կազմակերպչական բացառիկ ունակությունները, էնտուզիազմը՝ մասնավորապես նրա էրուդիցիան գիտության ասպարեզում և գործնական աշխատանքում, մշտական ձգտումը հարցերի կոլեկտիվ լուծման, պահանջկոտությունը և ճշտապահությունը իր ու շրջապատի նկատմամբ, հետևողականությունը՝ իր նպատակների մեջ, սերը դեպի երիտասարդ սերունդը և իր ժողովուրդը արժանի են ընդօրինակման և, նրա թողած ժառանգությունը պետք է փոխանցվի սերունդից-սերունդ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆՐԷԱԲԱՆՆԵՐԻ, ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՄԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ՎԻՐՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԺՇԿԱԿԱՆ ՄԱԿԱԲՈՒՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

УДК 616.9—02

Г. Б. Гукасян, Г. В. Ющенко, С. Ш. Рожнова, Т. С. Хачатрян,
К. Л. Мамиконян, А. В. Цаканян, Г. Ж. Ханджян

ЭПИДЕМИОЛОГИЯ ДИАРЕЙНЫХ ЗАБОЛЕВАНИЙ В АРМЕНИИ

Одним из ведущих направлений исследований, проводимых со дня основания Армянского института эпидемиологии, вирусологии и медицинской паразитологии им. А. Б. Алексаняна, является изучение кишечных инфекций, которые занимали первое место в краевой патологии республики. Так как структура кишечных инфекций в различные периоды подвергалась изменениям, соответственно изменялось и направление исследований. Так, с 30 по 60-е гг. ведущими были тифо-паратифозные инфекции. Наряду с ними определенное место занимали дизентерия и диспепсии различного характера. Начиная с 1960 г. отмечалось постепенное и последовательное снижение тифо-паратифозных инфекций, удельный вес которых в настоящее время в группе кишечных инфекций незначителен. С 1970 г. в Армении началась сальмонеллезная инфекция, которая в других регионах Союза была обнаружена еще в 1960 г. Заболеваемость сальмонеллезом в последующие годы заняла ведущее место в группе кишечных инфекций и до 1980 г. характеризовалась внутрибольничными вспышками (больше 50% годовой заболеваемости), поражением детей в возрасте до одного года (82—93%), отсутствием сезонности, превалированием контактно-бытового пути передачи, циркуляцией в